

**ԵԼՀ ֆակուլտետի գիտխորհրդի՝  
30.11.2020թ. նիստի N 5 արձանագրություն**

**Օրակարգ**

1. ԵԼՀ ֆակուլտետի դեկանի տարեկան հաշվետվություն:
2. Ընթացիկ հարցեր:

Գիտխորհրդի կազմում ընդգրկված 36 անդամներից նիստին ներկա էին 33-ը : Նախքան օրակարգի հարցերին անդրադառնալը ԵԼՀ ֆակուլտետի դեկան Գ.Բարսեղյանը ողջունեց գործընկերներին, հույս հայտնելով, որ միասին կդիմակայեն բոլոր ներկա և գալիք բարդություններին ու մարտահրավերներին : Նա շնորհակալություն հայտնեց ԵՊՀ հումանիտար և հասարակագիտական մասնագիտությունների գծով պրոռեկտոր Է. Ասրիյանին ԵԼՀ ֆակուլտետի գիտխորհրդի 5-րդ նիստին մասնակցելու համար : Նիստի նախագահ ընտրվեց ֆրանսիական բանասիրության ամբիոնի վարիչ, մ.գ.թ., դոցենտ Ջ.Հարությունյանը, ով խոսքը փոխանցեց Գ.Բարսեղյանին՝ ներկայացնելու տարեկան հաշվետվությունը : **ԼՄԵՑԻՆ**՝ Գ.Բարսեղյանը ներկայացրեց տարեկան հաշվետվությունը՝ առանձին ձևաչափով անդրադառնալով ԵԼՀ ֆակուլտետի բոլոր ամբիոնների կատարած աշխատանքներին :

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ**՝ Անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ, բ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ս.Ք.Գասպարյանը առաջարկեց դրական գնահատել Գ.Բարսեղյանի կողմից ներկայացրած հաշվետվությունը՝ հավելելով, որ ֆակուլտետում հսկայածավալ աշխատանք է կատարվել՝ չնայած առկա դժվարություններին /COVID, արցախյան պատերազմ/: Ներկայացնելով Գ.Բարսեղյանին, Ս.Գասպարյանը նշեց, որ նա, որպես ԵԼՀ ֆակուլտետի դեկան, բարձր պատասխանատվությամբ ու գիտակցությամբ է վերաբերում իր աշխատանքին, հետևողական մոտեցում է ցուցաբերում ֆակուլտետում առկա խնդիրներին:

Անգլերենի թիվ 1 ամբիոնի վարիչ բ.գ.թ., պրոֆեսոր Մ.Ապրեսյանը միացավ Ս.Գասպարյանի կողմից հնչեցված կարծիքին՝ հավելելով, որ պետք է դրական գնահատել Գ.Բարսեղյանի կողմից ներկայացրած հաշվետվությունը: Անդրադառնալով Գ.Բարսեղյանի որակական հատկանիշներին, Մ.Ապրեսյանը նշեց, որ ֆակուլտետը գործ ունի բանիմաց, խելացի ու հավասարակշռված դեկավարի հետ, ով կարողանում է լուրջ ու կարևոր որոշումներ կայացնել ի նպաստ ֆակուլտետի :

Գ.Բարսեղյանը բարձր է արժևորում թե՛ դասախոսների, թե՛ ուսանողների ջանքերն ու կատարած աշխատանքը, հետամուտ լինում նրանց մոտ ծագած ցանկացած աշխատանքային խնդրի լուծմանը :

Ռոմանական բանասիրության ամբիոնի վարիչ Բ.Գ.Գ., դոցենտ Հ.Բաղդասարյանը փաստեց, որ ֆակուլտետում մեծ թվով աշխատանք է կատարվել, ինչն էլ պայմանավորված է բարենպաստ ու համագործակցային մթնոլորտով , որը վկայում է ֆակուլտետի ղեկանի կատարած ամենօրյա ջանքերի մասին:

Արտասահմանյան գրականության ամբիոնի վարիչ Բ.Գ.Թ., դոցենտ Ա. Մեղրակյանը իր ելույթում նշեց, որ այսօրվա մարտահրավերներից ելնելով, բոլորը կախված են ուսանողի կարծիքից, որի համար Գ.Բարսեղյանը մեծ ներդրում ունի : Նա առանձին նվիրվածությամբ է վերաբերում իր ֆակուլտետի ուսանողին, դասախոսին :

ՀՀ ԳԱԱ Ակադեմիկոս, Ա.Մելքոնյանը իր ելույթում նշեց, որ վերը նշված ելույթ ունեցողները ներսից են դիտում Գ.Բարսեղյանի կատարած աշխատանքը, ինքը հնարավորություն ունի դրսից դիտելու և արժևորելու, թե ինչ ծավալի աշխանատք է տարվում ԵԼՀ ֆակուլտետում: Արտասահմանյան գրականության ամբիոնի դասախոս Ա. Սողոմոնյանը քաջ առողջություն և համբերություն մաղթեց Գ.Բարսեղյանին, քանի որ ֆակուլտետը մեծ է և բարդ, իսկ Գ.Բարսեղյանը կարողանում է ամեն ջանքի գնով հավասարակշռություն պահել ֆակուլտետում: Թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի վարիչ Բ.Գ.Թ., դոցենտ Ռ.Ղազարյանը իր ելույթում նշեց, որ կիսում է իր գործընկերների կարծիքը՝ դրական գնահատելով Գ.Բարսեղյանի հաշվետվությունը: Նա հավելեց նաև, որ ակնկալում է թիմային աշխատանք, որպեսզի ամեն ինչ չընկնի ֆակուլտետի ղեկանի ուսերին : Անգլերենի թիվ 2 ամբիոնի վարիչ Բ.Գ.Գ., պրոֆեսոր Յելենա Յերգնկյանը նույնպես միացավ գործընկերների կարծիքին՝ հավելելով, որ Գ.Բարսեղյանը մեծ ոգևորվածությամբ է աշխատում ֆակուլտետի առջև ծառայած խնդիրների վրա: Նա իր կոլեգաների նման դրական գնահատեց ղեկանի հաշվետվությունը:

ԵԼՀ ղեկանի տեղակալ դոցենտ Գ.Գրիգորյանը նշեց, որ ցանկանում է Գ.Բարսեղյանին ներկայացնել այլ դիտանկյունից: Նա հավելեց, որ առիթ ունի նրա աշխատանքը գնահատելու ամենօրյա ձևաչափով: Գ.Գրիգորյանը ընդգծեց նաև, որ շատ ուրախ է, որ ղեկանը նմանօրինակ գնահատականի է արժանանում իր գործընկերների կողմից: Գ.Բարսեղյանը հոգատար վերաբերմունք ունի և՛ ուսանողների, և՛ դասախոսների նկատմամբ: Գ.Գրիգորյանը նշեց, թերևս, ամենակարևոր հանգամանքներից մեկը՝ Գ.Բարսեղյանը ֆակուլտետին վերաբերում է նույն հոգատարությամբ, ինչպես նա վերաբերում է իր տանը:

Հումանիտար և հասարակագիտական մասնագիտությունների գծով պրոռեկտոր Է. Ասրիյանը իր ելույթում նախ շնորհակալություն հայտնեց Գ.Բարսեղյանին ներկայիս ծանր ժամանակահատվածում իր հերոսական աշխատանքի համար: Նա նշեց, որ ԵԼՀ ֆակուլտետի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ այն բավականին մեծ է, և Գ.Բարսեղյանին բաժին է ընկել ԵՊՀ-ի ամենատեյտինգային ֆակուլտետներից մեկը: Գ. Բարսեղյանը, որպես ԵԼՀ ֆակուլտետի դեկան, չափազանց սրտացավ և հետևողական վերաբերմունք ունի ֆակուլտետի նկատմամբ, ֆակուլտետի կարիքները փորձում է լուծել բոլոր հնարավոր ռեսուրսներով: Պրոռեկտորը հավելեց նաև, որ իրենց հաճախակի հանդիպումներն արդեն փաստում են Գ.Բարսեղյանի՝ ֆակուլտետի ամենօրյա հոգսերով տարված լինելու իրողության մասին: Է.Ասրիյանը Գ.Բարսեղյանի տարեկան հաշվետվությունը գնահատեց դրական :

Գ.Բարսեղյանը շնորհակալություն հայտնեց իր գործընկերներին դրական գնահատականի և անկեղծ ելույթների համար: Հատուկ շնորհակալություն հայտնեց պրոռեկտոր Է. Ասրիյանին՝ հոգեբանին հարիր ոճով սուր անկյունները հարթելու, ծառայած խնդիրներին դրական լուծում տալու համար: Գ.Բարսեղյանը խորին շնորհակալություն հայտնեց նաև ԵՊՀ ռեկտորի պաշտոնակատար Ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գ.Գևորգյանին ԵԼՀ ֆակուլտետի ընդունելության քննությունների առարկաների ընտրության /օտ.լ գրավոր և օտ.լ.բանավոր/ հետ առնչվող հարցը լսելի դարձնելու ՀՀ կրթության և գիտության նախարարությունում:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Գ.Բարսեղյանի տարեկան հաշվետվությունը գնահատել դրական :  
Որոշումն ընդունվեց միաձայն :

Ֆակուլտետի դեկան և գիտական խորհրդի

նախագահ, Բ.Գ.Թ., դոցենտ

Գիտական խորհրդի

քարտուղար՝ Բ.Գ.Թ., դոցենտ

